

18451

ՄԱՅՆՆԱՇԱՐ «ՅՈՒՆԱԲԵՐ», ԹԻՒ 14

Ա. ԱԶԱՐՈՆԵԱՆ

ԿԱԹՈՒՇԿԸ



ԳՍՀԻՐԷ
ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»
1928

891.99
Ա-42

226

891.52
2-42

27 MAY 2011
28.0

ՄԱՏԵՆԱՇԱՐ (ՅՈՒՍԱՔԵՐ)

ԹԻԻ 14

Ա. ԱՅԱՐՈՒՆԵԱՆ

ԿԱԹՈՒՇԿԸ



ՍՈՒՐԲ ԵՆՐԱՄ ՇԵՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ԴԱՆԻՐԷ
ՏՊԱՐԱՆ (ՅՈՒՍԱՔԵՐ)
1926

1105 YAM 1 S

1905 SO. 0

1105 YAM 1 S

4U0NHC4C

LAURENCE BEECHER JR
1105 YAM 1 S

1105 YAM 1 S

I

Ձմրան թղպոտ ու ցուրտ երեկոյ էր :
Բարեկենդանի վերջին շաբաթը :

Պաղ մշուշը խաւարի հետ զանգւած , հան-
դարտ իջաւ գիւղի վրայ , ըսնեց փողոց ու
տուն . պատերը թացացան առանց անձրեւի :
Ճրագները վաղ վառւեցին :

Հեռւից լսոււմ էր դափ ու զուռնայի
ձայն .

Գիւղում հարսանիք կար :
— Կարկատի՛ր կնիկ , էս անտէրը :

Ու Դահ Բաշոնց Անտոնը օրտնեղած շար-
ժուժով հանեց վրայից ու կնկայ առջեւը ձը-
գեց իր հնամաշ ու պատառոտուն քուրքը :

Կինը նստեց թոնրի շրթին՝, ճրագի առաջ ,



2233-2011

ասեղը ձեռք առաւ ու կռացաւ քուրքի վրայ :

— Ո՛ր մէկը կարկատեմ տնաչէնի մարդ ,
տրտնջաց նա , ասեղ տնկելու տեղ չի մնացել :

— Շան մորթուց պոկի՛ր , ու կարկատիբ
էդ թերմաչը , ասում եմ . չե՞ս լսում , Նաւոն
կանչում է , ուստա Նաւոն :

Գիւղի բրուտի որդու հարսանիքն է . ուս-
տա Նաւոն իր զուռնայով պտտում է փողոց-
ներում , կանչելով ամենքին : Բրուտը գիւղի ջո-
ջերից չէ , բայց նրա ուրախութիւնը ամենքին
է , ո՛վ կուժ ու կուլայի պէտք չունի . ո՛ւմ
սափորը տարին մի քանի անգամ ջրի ճամբին
չի կտարուում : Աղքատ ու հարուստ , իշխան ,
գզիր ու նախրպան — օղջ գիւղը պիտի
պատւի Բրուտին : Դան Բաշոնց Անտոնն ի՛նչ-
պէս յետ մնայ . թէեւ չունեւոր բայց գիւղի ե-
րեւելիների , ջօջերի մէջ պակաս մարդ չի Ան-
տոնը :

Տակաւին յիսուներն չը հասած , բոյով-բու-
սաթով տղամարդ է :

Թիկունքը՝ լայն , բազուկները հաստա-
տուն . ձայնը թաւ ու անուշ . խօսուածքը ,
կեցուածքը շնորհալի :

Կերպարանքը՝ հօ՛ , կատարեալ իշխանա-

կան :

Թանձր ու ոլորուն բեխերը ճոխացած ա-
ծիլած միբուքից մնացած երկու հարուստ փըն-
ջերով , ազեղնաձեւ ու խրօխտ . ձգոււմ են այ-
տերն ի վեր :

Անտոնը սիրում է մատները թաղել բեխե-
րի թաւչեայ թանձրութեան մէջ ու նազանքով
ոլորել ու ձգել մինչեւ ականջները :

Ոչ մի իշխան գիւղում այդպիսի բեխեր
ունի . և ոչ ոք գիտէ այնքան վայելչութեամբ
իր բեխերը սրել . Երբ նա հրապարակում , բազ-
մութեան մէջ ձեռքը բեխերն է ասնում հան-
գիսաւոր շարժումով , ամեն ոք գիտէ որ Ան-
տոնը ասելիք ունի . Եւ իր իմաստուն խօսքը
վերջացնելուց յետոյ՝ նորէն նա շոյում է իր
բեխերը յաղթական ու լուրջ :

Անտոնի իշխանական հրապոյրը սակայն
մենակ իր բեխերին մէջ չէ , կայ իր քեանքիւրը—
ածիլած գլխի վերի մասում անհոգօրէն ձգւած
չքեղ փունջը մազերի՝ որպէս աքլորի ցցունք :
Անտոնը միակն է գիւղում , որ այս հպարտ
զարդն ունի :

Այս բոլորին միանում է և Անտոնի իշխա-
նական հազը :

Գիւղի ամեն մի աւազ իւրայատուկ ար-
ւեստակեալ հազն ունի հրապարակի համար,
բայց Անտոնի հազը գերազանցում է ամենքին.
Նա նման է քաչ ընկած գորգի վրայ գաւազա-
նի հարւածների ձայնին, որ վերջում դառնում
է խոռոչում խեղդւած վտակի պորթկոց:

«Ուհը՛, ուհը՛, ուհը՛...»

Երեք անգամ. դանդաղ ու հանդիսաւոր.
վերջինը՝ երկար, որ աւարտւում է չոր տնքո-
ցով:

Ու այդ հազը մերթ խիստ կամ մեղմ,
մերթ թաւ կամ խորը. նայելով տեղին ու
պէտքին:

Սակաւախօս է Անտոնը, բայց հազը կայ,
որ կամ հեգնանք է ու զատում, գոհութիւն է
ու ղժկամակութիւն, պերճախօս հազը...

Իշխան է ծնւած մարդը:

Եւ իր չար բաղդից տնքանդ կարիք ու
անողորմ չքաւորութիւնը բոլոր այս բնական
բարեմասնութիւնների վրայ ասեօ չարամտօրէն
ձգել է մի թշւառ քուրք, հին ու ծւատւած,
ինչպէս պառաւած ու բրդաթող շուն:

Ու զլիսին ունի միշտ մի աւերակ ու ան-
ձեւ փափախ, որ տեղ-տեղ ցուցադրում է իր

լերկ մորթին, ինչպէս սպիացած վէրք, կա-
պոյտ կտաւի մի խունացած ու լայն շալւար
լրացնում է Անտոնի զգեստի վիրաւորիչ խեղ-
ճութիւնը:

Եւ յետոյ իր պապենական տունը... կի-
տաւեր ու խարխլած՝ նա մէն-մենակ ցցւած է
ընդարձակ բակում, որ պատեր չունի, ու
խառնել է փողոցին. աշխարհն է տեսնում
այդ տան անցուդարձը, հովերն են փչում
վրան, մոլորւած անասուններն են գալիս այն-
տեղ արածելու վայրի խոտերը:

Շատ է կարկատել Անտոնն իր տունը,
կքւող գերանի տակ երկրորդ սլան է տնկել,
ծուած պատերի մէջքին թումբ է քաշել, կը-
տուրը ցեխով ծածկել. ի զո՛ւր, Անտոնի տու-
նը մի չար հեգնանք է իր իշխանական չարժ
ու կեցուածքին: Աշնան ու գարնան յորդ ան-
ձրեւներին սեւ առաստաղին կաթուշկն է ծո-
րում, ինչպէս սեւ անէծք: Ու տան հիւսիսա-
յին պատի մի անկիւնը խոնաւութեան երեսից
խարխլել է ու ծուել. փայտի մի ուժեղ յենա-
րան է զրել Անտոնը:

Կը գիմանա՞յ արդեօք մինչեւ գարուն: Ու
այդ կաթո՛ւշկը...

Անճրեւի առաջին կաթիլների հետ Անտոնի տան առաստաղը ծածկուում է սեւ քրտինքով, ու սեւ կայլակները կախուում են, երկարում հեգնող լեզուների պէս, ու յետոյ... հըլը՛փ, հըլը՛փ, հըլը՛փ... ո՛ւր փախչել...

Սեւ, մածուցիկ հեղուկը թափուում է անկողինների ծալքի վրայ, թըջում է թոնիրը, հացի սփռոցը, փռածք, խսիր, ամեն ինչ լողում են պաղ, թանձր հեղուկի մէջ:

Ոչինչ այնպէս չի վիրաւորում ու չի նեղում Անտոնին, որքան այդ կաթուղին ու իր քուրքը: Մէկը՝ ներսում, միւսը՝ դրսում աշխարհի առջեւ իր թշնամիներն են, որոնցից ազատուել չի կարողանում,

— Գոռանամ ես, էս քեզ վայել է, Անտոն ջան, վշվշում է կինը կարկատելով քուրքը:

— Կարկատի՛ր կնիկ, կարկատի՛ր, Աստուած ողորմած է, խելքը, պատիւը շորի մէջ չի, մենք էլ մեզի գետրայ մարդ ենք:

— Թող ընի, հալբաթ շորի մէջ չի, դէ իշխանների հետ ես նստում, վեր կենում, բա էս իշխանին վայել շո՛ր է. բաղդի տէրը մեռնի, ումի՞ց ես պակաս. բա Աստուած կը վերցնի՞, որ քեզ նման իշխան մարդը էս քուր-

քով մարդամէջ գուրս գայ, հարսանիք գընայ:

— Կարկատի՛ր կնիկ, կարկատի՛ր, Աստուած դրանից աւելի ծանր բաներ է վերցնում. Կարկատի՛ր:

Ասում է Անտոնը, բայց հոգու խորքում համաձայն է կնոջ հետ. չի ընկրկուում սակայն, ու իր աղքատութեան բեռը շալակած՝ պայքարի է գուրս եկել աշխարհի գէմ, բաղդի գէմ:

Ու բռնել է բաղդի կոկորդից, սղմում է իր ուժեղ մատներով, նայում է նրա աչքերի մէջ մոլեգնօրէն. նայում է ու բաղդի բիբերի մէջ ինքն իրեն է տեսնում, ինչպէս հայելու մէջ. հարուստ մարմնակազմ, սահմով դէմք, փարթամ ու գեղեցիկ բեխեր, լայն իմացական ճակատ խելօք աչքերի վրայ... ու այս շան քուրքը, այս բրդաթող փափախը գլխին տընկած ասեո բօստանի խրաւիլակ. «Հըր՛, ես քո ստեղծողի... նահլա՛թ քեզ, ... կը փչրեմ. է է՛», մանչում է նա յաճախ իր մենութեան մէջ:

Ո՛ւմ դէմ է զայրոյթը, ո՛ւմ կը փչրի, ինչո՛ւ. չը գիտէ Անտոնը:

Բաղդը հեռու է, աննիւթ, քուրքը չի
փչրուի, փափախը նոյնպէս:

Ապա իշխանները...

Ինչպէս կ'ուզէր նա զիւղի ամենից հա-
րուստի, օրինակ այն հաստագլուխ Շահինի
մէջքը փչրել:

Կինը կարծես նրա մտածումները գուշա-
կեց:

— Ինչ է, Բագալենց Շահինը քեզինից
խելօ՞ք մարդ է, կնիկը որ ժամ է գալիս,
տասն կողմից տեղ են բացում, որ անցնի,
վիզաց կինը, բաղդի բան է, ասում եմ:

Ո՞ւր բռնել բաղդը, Անտոնը լուռ է, բայց
սղմած բառնցքի մէջ եղունգները միսն են
մտնում. Անտոնը կրճատում է ատամները աշ-
խարհի դէմ, բաղդի դէմ:

Ու աշխարհը հոճուում է բերանարաց. ու-
նեւորները խնդում են թաւ, հանդարտ ծիծա-
ղով. չունեւորները լիքը ու չար քրքիջով:

Աշխարհից դուրս է Անտոնը. ունեւորնե-
րից նրան դուրս է չպրտել իր քամբախ քուր-
քն ու իր փափախը, չունեւորներից իր իշ-
խանական շարժումները ու իր հազը:

Երկու կողմից՝ հարուստ ու աղքատ բամ-

փում են գլխին:

Ու մենակ է աշխարհի դէմ:

Ինիսերն ու քեաքիւլը, հազը, հպարտ
կեցւածքը չեն օգնում. նրանք միայն բորբո-
քում են իր չուրջը եռացող ատելավառ կը-
րակը:

Ու թշնամին տանից է. այս զզգուած քուր-
քը, որի պատառածքներից նզովւած կարի-
քը լեզու է ցոյց տալիս ու ծամածռութիւններ
անում աշխարհին խնդացնելու համար:

Փողօցում հարսն ու աղջիկ իրար են անց-
նում, երբ հեռուից լսում է Անտոնի հազը.

«Էհ՛ը՛, ըհ՛ը՛, ըհ՛ը՛...»

— Չոռ ու զահրումա՛ր, թա՛ղեմ քեզ,
քուրքդ լւացողը տանի, հազին նայի՛ր, քուր-
քին նայի՛ր:

Ու խեղդւած հոճոց է բարձրանում յե-
տեւից, ու չանչեր են բարձրանում իր թիկուն-
քին:

— Հողեմ գլուխդ, միրքից գողացել է բեխ
է շինել, լսում մի այլ ձայն կանանց խմբից.
Քրքիջն աւելի է բարձրանում:

Անտոնը գիտէ այս բոլորը, ապրել է սար-
սուռով ու ցասումով, ու այժմ՝ նոյն խոր-

աակիչ պատկերն է անցնում իր աչքի առաջից, ինչպէս երեսին ապտակող ձեռքը:

Նաւօի զուրնան ու նաղարան մօտեցաւ իրենց տանը. Ասես անիծւածը գալիս է յառկապէս Անտօնին դուրս կանչելու իր թչւաքուրքով: Հարսանիքի վերջին օրն է. զուռնան կանչում է ամենքին՝ դուռ-գրկից, բարեկամ, ազգական պիտի գնան «ծաղ» տալու (1):

Անտօնի մտածումները փոխւեցին, ցաւն այժմ մինակ քուրքը չի:

Ապա ծաղը, օրտեղից պիտի վճարի:

Ուտա նաւօի հոգսը չի. նրա զուռնան կլկլում է Անտօնենց գրանը, փողոցներում գափն է որոտում. աղքատ ու հարուստ ո՞վ կը հարցնի. իշխան ես, գիւղի ցաւն ու խնգումը քոնն է, մէջտեղ արի'...

Այս մասին է խորհում Անտօնը թանրան չրթին նստած:

Արդէն գիշեր է. մի երեսան օրօրոցում քնած է մուշ-մուշ, միւտը՝ հինգ տարեկան

(1) Ծաղկանչել. — Հարսանիքի վերջին երեկոյին հիւրերի կամաւոր դրամական նւէրը հարս ու փեսին:

Ստեփանը մօր կողքը սղմւած, հանդարտ կըրծոտում է մի կտոր կլօճ հաց և քնելուց առաջ. կատուն մռռում է երեսայի կողքին:

Դափ ու զուռնայի ձայնը իսպառ մօտեցաւ:

— Կնի'կ, մեզ մօտ են գալիս էդ անիրաւները, քուրքը պահի'ր ասաց Անտօնը:

Կինը խլեց առջեւի քուրքը և շտապով ծալքի տակ թազցրեց. նոյն վայրկեանին հարօտանիքի ազափները, մոմերով, կերոններով, գինու շիշերը ձեռքերին դափ ու զուռնայի որոտով ներս ընկան, ու ճիչ ու աղմուկով պարել սկսեցին:

Եկել են Անտօնին հրաւիրելու:

— Բարով Ստեփանի կանաչ-կարմիրը կապենք, Անտօն ամի:

— Ողջ լինեք, ձերն էլ, ձերն էլ:

Բաժակները դատարկւեցին, դափ ու զուռնան հեռացաւ, տանը կրկին լռութիւն տրեց:

Կինը գնաց քուրքը դուրս քաշեց թագառոցից ու վերսկսեց աչխատանքը:

— Բազդի տէրը մեռնի, մրմնջաց նա ու աչքերը որբեց ծածուկ:

— Սիրտդ լէն պահիր կնի'կ, ասաց Ան-

տոնը, քուրքը հագաւ, փայտէ փոքրիկ սան-
րով քեաքուլը կարգի դրեց, գլխարկը թափ
տւեց, գլխին դրեց, բեխերը ոլորեց ու սրեց,
ձեռք առաւ չալիկը, կեռագլուխ գաւազանը:

Նայեց ինքն իրան, մի վայրկեան նրան
թւաց. թէ լաւ է ու յանկարծ աչքն ընկաւ
իր քուրքի փէշերին, որոնք երկու կողմից
փոխանակ ծնկները ծածկելու, ցցուով էին
վեր բաց ձեռքի պէս. փորձեց ծալել, շտկել,
ի զուր, նորէն ցցեցին:

— Անտէր մնաս, դուն իմ հոգին կերար,
մամռաց նա ատամների արանքից. ի՞նչ անի
իշխանների մէջ իր անպատիւ քուրքով:

Ամենքը Բուխարայի փափախ ունին, ատ-
լազ արխալուղ, հաստ բարաք, Բաղալենց
Շահինը հօ, այդ բոլորի վրայ թանձր բուր-
մա ունի:

էրկէն Ղազարը՝ նոյնպէս:

Սաքանը Աստծու կրակի տէրն է:

Ուստա Առանը մէկի տեղ՝ երկու չուխայ
ունի, Հաշտարխանից բերած գալիբարգին
գլխին:

Ո՞ր մէկը յիշի:

Եւ յետոյ այս ծաղը:

Ամեն մարդ իր տեղն ու չափն ունի. Իշ-
խանի հե՛տ ես ուզում եմ քչել, մէյրան ա-
րի Անտոն, ձուկ բռնողի յետեւը կը թրջւի,
ուղաը չամչայով (1) չեն ջրի, աղւէսն առանց
թագու (2) չի բռնւի, թագիդ հան մէջտեղ:

Թագին այս երեկոյի ծագի փողն է:

Գրպանները խառնեց, ու հանեց վեց ա-
բաօի:

— Վեց արասիով աղւէս չես բռնի, դարձ-
եալ մամռաց նա, թագիդ հան մէջտեղ:

— Կնիկ, էս իրիկոյ ծաղ կը կանչեն:

— Վեց արաօին բոլ է, Անտոն:

— Ինչ ես ասում ա՛յ կնիկ, զուր չի ա-
սած. «կնկայ մազը երկար կը լինի, խելքը
կարճ». վեց արասով մէյրան դուրս գալ չի
լինի. ուզում եմ արար-աշխարհ վրաս խնդայ:

Այս հարսանիքին երեք օրից ի վեր ինչեր
է քաչել Անտոնը այդ արար-աշխարհի երեսից,
Նրան թւում էր, թէ ամենքը հաւաքւել են

1) Չամչայ — Կերակուր խառնելու խոշոր
ցցալ:

2) Թագի — Բարակ շուն որսի:

AR 33-2017



յատկապէս իր քուրքը տեսնելու. ո՞րը թագ-
նւել:

Ամեն անգամ հարսնքատուն ներս մտնե-
լիս, ասես ամենքը խօսք մէկ արած նրան են
նայում ու փոփոսում:

«Էլի եկաւ Անտոնի քուրքը...»

Ասես հարսանիք գնացողը Անտոնը չի,
այլ իր անիծւած քուրքը:

Ու հիմայ, այս երեկոյ այս բոլորի վրայ
աւելանայ վեց արասի՞ն...:

Խաղք ու խայտառակութիւն!

Դահ Բաշոնց Անտոնը... վեց արասի՞...
ապա թէ մէկ էլ իշխանները հանեն ու մէջ-
տեղ գնեն հինգ տասը մանէ՞թ...:

Յետո՞յ.

Ու գզիրը կանչի.

«Տուներ շէ՛ն», դարգեահը լէն, Դահ Բա-
շոնց Անտոնի, մի մանէթ, հաա՛...:

Կը կանչի արար-աշխարհովը մէկ, ու ա-
մէնքը կը դառնան իր քուրքին կը նայեն,
ո՞րը ծածկւել. իշխան մարդ ես ախր:

Ո՛չ, ծաղի խաղքուլթեան չի հանդուրժի
Անտոնը, թէկուզ այս տունը փլչի գլխին:

Անցեալ աշնանը պետական հարկը վճա-
րելու համար մի երինջ վաճառեց ու այդ
գումարից տակաւին հինգ մանէթ մնում է կնոջ
մօա հոգեպահուստ:

— Կնիկ, էն հոգեպահուստը բեր:

Կինը նայեց շարած ու հարցական:

— Ապա գարնան հա՞րկը, տնայէնի մարդ:

— Էն հինգ մանէթը բե՛ր ասում եմ,
կրկնեց Անտոնը, ու ձեռքը տարաւ բեխերը
ալորեց:

Կինը վեր կացաւ անխօս, մի արկղ բա-
ցեց, ինչ որ փաթթոցներ քանդեց ու հինգ
մանէթը ամուսնուն պարզեց:

Անտոնը դրամը խնամքով գրպանը դրեց
ու գուրս գնաց:

Թուղպը աւելի էր թանձրացնել ու քաշա-
ցել. պաղ հով կար:

Երեւի ձիւն կը գայ էս գիշեր, խորհեց
Անտոնը.

Եւ անհանգիստ չեղաւ իր տան համար:

Կտուրի ձիւնը կարելի է աւելել. կաթուղ-
կի վտանգ չը կայ:

Ու այս հանդարտ մտածումով նա շարու-
նակեց իր ճամբան դէպի հարսնքատուն:

Ուշացել էր:

II

Անտոնը քայլում էր խաւարի մէջ մեն-
մենակ ու ինքն իրեն խօսում .

— Աստուած կտրի էսպէս հարսանիքը , էօ
էլ եղաւ ուրախութիւն . . .

Հոգին ալեկոծ էր .

Մաղի դրամն ունէր գրպանում , բայց մի
գժւարին գործի գնալու զգացումն ունէր .

Պայքար կար իր աջիւրդ . պայքար իրեն
վայել , պատուաւոր տեղի համար . Քսան տա-
րուց ի վեր հրապարակներում թէ տօնախում-
բութիւններին նա զօռով է իր տեղը բռնել
չարախնդաց բազմութեան մէջ .

Եւ այժմ ի՞նչ է սպասում իրեն . անիծ-
ւած քուրքի կարկատանը չը լինէր , ժամ առաջ
կ'երթար իրեն արժանի տեղը կը բռնէր .

Ուշացել է :

«Անտէր մնաս . . .» նորից մոմուաց նա իր
քուրքի հասցէին , օրի երկու փէշերը զարկւած
թաշունի երկու թեւերի պէս ծեծոււմ էին իր
ծնկները :

Ու ցասում ունի գիւղի ջօջերի դէմ :

Ուզածն ի՞նչ է որ . իր արդար տեղը , և
ամէն անգամ օր Անտոնն ուշանում է այսպէս .
իշխանները միշտ այնպէս են նստում իրար
սղմած , որ ասեղ ձգելու տեղ չը մնայ ա-
րանքում :

— Ես ձեր մարդ ասողի . . . Նորէն մամը-
ուաց նա , գուք էլ գեղի իշխան էք , դատա-
ւոր , երկու իշու գարի չի կարող ջոկել իրա-
րից Բաղալենց Շահինը , ու միշտ կը բազմի
առաջին տեղը . Չէքը լիքն է . մէկէլններն ի՞նչ
են , էրկէն Ղազարի լեզուն բռնեց , երբ մե-
ծաւոռը գեղ եկաւ հէրու . Սաքանը հօ կծիկը
դրեց , գեղից չիախաւ , ուստա Առանը մի գը-
լուի կրկնում էր «աղա՛ , քո դուլն ենք . . .»
Ջուղար տուղը , բերան շատուղը ո՞վ էր . էլի
Դահ Բաշոնց Անտոնը , ամենքի լեզուն կա-
տիկն էր ընկել . ես ձեր մարդ ասողի . . . հիմայ
բազմել նն . . .

Խօսում էր խաւարի մէջ Անտոնը , ու

ինքն էլ չիմացաւ, ի՛նչպէս հասաւ հարսնաքա-
տուն:

Ընդարձակ շէնքի շորս պատերի տակ,
յատակին, գորգերի ու խտրների վրայ երկու
կարգ դէմ առ դէմ ծալապատիկ շարուած են
բազմականները:

Գորգ, բարձ ու մինտար քահանայի, սէ-
սի ու իշխանների համար, թաղիք ու խտր
մնացած հասարակ հրաւիրեալներին:

Ազգայինները բակ բռնած պատկառանքով
կանգնած են բազմականների սպասին:

— Ուհը՛, ուհը՛, ուհը՛... .

Դահ Բաշոնց Անտոնն է:

Երիտասարդներն իրար անցան չափազան-
ցրած յարգանքով:

— Ճամբայ տւէք, տեղ տւէք, ա՛յ տղա,
յետ քաշւի, Անտոն ապէհըն է գալիս, ազգափ-
ների խիտ շարքը պատուուեց Անտոնի քուրքի
առաջ:

— Ուհը, ուհը, ուհը՛... .

Հաղալով ու ծանրաքայլ առաջանում է
Անտոնը չարաճճի ու ծիծաղկոտ հայեացքների
միջից ու զգում, որ յարգանքի այս ցոյցը
արտասովոր է, արւեօտակեալ:

— Հը՞, տղէրք ջան, կատարներդ տաք
է, ասում է Անտոնը հովանաւոր եղանակով:

— Քո կենացն ենք խմել Անտոն ապէհը,
քո ազիզ կենացը:

— Վահ, տնայէններ, իմ կենացը, բա-
էս բաղմած իշխաններին չը խղճացի՞ք. կը
չորանան ախր:

Ընդհանուր քրքիչ բարձրացաւ ջահիլնե-
րի խմբի մէջ:

Ու Անտոնը դիմեց բազմականների կեդ-
րոնը, իշխանների ու քահանայի դէմ ու դէմ:

— Ուհը՛, ուհը՛, ուհը՛... .

Անտոնը վրայ-վրայ հազեց մի քանի ան-
գամ՝ ուշադրութիւն գրաւելու համար:

Ի գո՛ւր... .

Շահինը եռանդով խօսում է քահանայի
հետ ու անհոգօրէն շոյում իր փասաւոր մի-
րուքը:

Անտոնը լաւ գիտէ, որ նա նկատել է ի-
բեն, բայց դիտմամբ վեր չի նայում: Սաքա-
նը հռետում է ուսի հետ լայնօրէն բացած իր
անատամ բերանը: Էրկէն Ղազարը ինչ որ
փոփսում է երիցփոխի ականջին ու երկսով
միաժամանակ խնդում են դունչ դնչի տւած:

Առանը մատներով խաղում է խալիչայի նախ-
չերի հետ և վեր չի նայում:

Անտոնը մնացել է կանգնած, ասես իբ-
քուրքը լաւ ցուցադրելու համար:

«Ի՞նչ եմ արել ձեզ, անհոգիներ, մարգ-
եմ չէ՛, մտմտում է նա շրթունքները կծոտե-
լով, քուրքս հին է, հասկացանք. ձեր չորերը
թազա, թանկագին, հասկացանք, ապա որ
մեծաւորն եկաւ, ո՛ւր էիք, մկան ծակը ծախու-
առաք, ձեզ մարգ առողի...» Կայծակի
պէս այս մտքերը անցնում են իր գլխով, ու
նա մի ոտքից միւսին յենւելով նորից հազում
է աւելի թանձր, աւելի բուռն:

— Ըհը՛, հը... Ըհը՛, հը... Ըհը՛, հը,
հը, հը...

Ի գո՛ւր:

Բազմած ջոջերը չեն նայում:

Անտոնն զգում է, որ մի բան պիտի անի.
Ի՞նչ, չը գիտէ, բայց մի ծանր բան:

Չը կռանալ արդեօ՞ք, խել գինով լի շիշը
ու չպրտել հէնց այդ Շահինի գլխին:

— Նահլա՛թ քեզ, չար, սատանայ:

Նա ատամները կրճտեց ու կրկին հազաց
աւելի թափով, աւելի երկար:

Յետեւում, ջահիլների խմբի մէջ հեգնա-
կան քրթմնջիւնը զօրացաւ, Անտոնն զգում
է, ինչպէս կարմրում են ականջները, նրա
ծոծրակը վառում է չար ու հեգնող հայ-
եացքների տակ, և իր խռովքի մէջ քուրքի
փէշերը քաշքշում է ծնկներին, ու նրան թը-
ւում է թէ անիրաւ քուրքը վրայից դուրս
է ընկնում փախչելու համար այս վատ հայ-
եացքների երեսից:

Իր գերագոյն իղձն է վայրկեան առաջ
նստել, մի տեղ թագնւել քուրքի խաղքուլթիւնը
պարտկելու համար, և ամենքը չորս կողմից
ասես դաւ են նիւթել նրան կանգնած պահե-
լու, որպէսզի կուշտ զւարճանան այդ թշւառ
քուրքի տեսքով:

Անտոնը հեւում է կանգնած տեղում. նրա
հուժկու բազուկները գողգողում են կատա-
ղուլթեան սարսուռով մի բան փշրելու, մէկի
մէջքը խորտակելու անասելի տենդը ձգձգում
է նրա ջիւերը, ինչպէս ամեհի երիվարն իր ե-
րասանակները. կրծքի խորքից մի բան է
բարձրանում, քնած մի հրէշ, որ չանգուում
է նրա ներսը ու մօտ է պոռթկալու. ահա
բարձրացաւ, բարձրացաւ հրէշը, կոկորդն է

խեղդում, լեզուն չորացնում, հազն անգամ մե-
աւ, իր իշխանական, վեհափառ հազը:

Անարգանքը շատ է ծանր:

Դահ Բաշոնց Անտոնը գեղի շո՛ւն է...

Դռները չպրտուած աղտոտ լա՞թ, որ ով
ազի վրան թփի՞...

— Էս հարսանիքը տէր չ'ունի՞. աննա-
մուսներ, մոնչաց նա, ու աջ բազուկը ձգւեց
դէպի առաջին շիշը:

Ու ամենքին թողած, կատաղի հայեաց-
քը թուշնոտ նետի պէս շեշտակի ուղղել է Շա-
հինին, որ առաջինը նկատեց նրա օպառնա-
կան շարժումը, հասկացաւ վերահաս վտանգը
ու կեղծ սրտցաւութեամբ բարձրաձայն կան-
չեց:

— Վա՛հ, Անտոն ախպէ՛րն է կանգնած,
սո տեղ արէք, սո աննամուսներ:

Իրարանցում ընկաւ շարքերում, ամեն
օք իր տեղում մի փոքր շարժում արեց տեղ
բանալու համար:

— Էստեղ համեցէք, էստեղ, Անտոն ախ-
պէր, ձայն տւին այս ու այն կողմից:

Անտոնը կանգնած է լուռ ու գունատ և
մոլեգնոտ հայեացքը Շահինին սեւեռած, դո-

ղում է ամբողջ մարմնով:

— Շահի՛ն... ի՛նչ ասեմ, ասաց Անտոնը
կռանալով իր հակառակորդի երեսին, ի՛նչ ա-
սեմ, դու Բաղալենց Շահինն ես, ես Դահ
Բաշոնց Անտոնը:

— Էէ՛ յետո՞յ:

— Յետոյ էն որ, Շահի՛ն, մարդ ասածդ
էս տեղ չի, ա՛յ էս տեղ է, ու Անտոնը ձեռ-
քը մեկնեց նախ դէպի գրպանը, ապա ճակա-
տը:

— Սարսա՛ղ, մամաաց Շահինը, ջղայնօ-
րէն քաշքշելով իր միբուքը, գնա՛ նստիր, էլ
ի՛նչ ես շուլուղ անում:

Հետու, գորգերի ու խսիրնբրի սահմա-
նում մի փոքրիկ տեղ բացւեց վերջապէս.
Անտոնը գնաց նստեց, քուրքը ծնկներին հա-
ւաքեց ու մնաց լուռ ու մաշլ:

Նրա մի կողմում Սօլկար Սըհոն էր. միւս
կողմում՝ Բրինդար Մկրտիչը:

«Դահ Բաշոնց Անտոնի տե՛ղն է էս»,
մամտում էր Անտոնը աչքի սակից իր հարե-
ւաններին նայելով:

Մածուկ համարեց իր շարքի բազմական-
ներին մինչեւ քահանան, տեսնը չորրորդ տեղն

էր իրենը :

Ո՛ւր մեացին ուէս , քահանայ , իշխաններ . . .

Ու հոգում անհնարին դառնութիւն կայ աշխարհի դէմ , նորից նա դուրս է չպրտւած իր շարքից :

Ի՛նչպէս կ'ուզէր մէկիկ բռնել այդ իշխաններին ու քաշ տալ փողոցների ցեխերի միջից , արորել ոտքերով ու հռհռալ քաշ տալ մանաւանդ Բաղալենց Շահինին միրուքից բռնած հող ու մոխիրների վրայով ու խելայեղձօրէն քրքրլալ բոլորի վրայ . ի՛նչպէս կ'ուզէր բոլորի աւերածը տեսնել , բոլորի՛ , բոլորի՛ :

— Աննամուսնե՛ր . նորից մամուաց նա , առամների արանքից :

Հասկացան արդեօք հարեւանները :

— Գինի խմի՛ր , Անտօս ախպէր , գինիի՛ , առաց Բըինդար Մկրտիչը նրա բաժակը լցնելով :

Անտօնը լուռ վերցրեց բաժակը ու մի թափով դատարկեց :

Լաւ էր :

Ուստայ Նաւօի նայի դողդոջուն մրմունջը բարձրացաւ :

Այս էլ լաւ էր , խռովայոյզ հոգին կամաց կամաց հանգստացաւ :

— Մէկ էլ լից :

Անտօնը դատարկեց և երկրորդ բաժակը . տրամադրութիւնն իսպառ փոխեց , նա ժպտաց իր հարեւաններին , բեխերը ուրրեց ու մեղմութեամբ հազաց , ուստայ Նաւօն ոգեւորւած էր : Նայը քաղցրահնչուն ու դողդոջ մրմնջում էր ինչպէս հովի տակ հեծեծող եղէգն , ազափները աղմկում էին տունը . ձիծաղ , ուրախութիւն ամեն կողմ , կերուխում սկսեց :

Քահանան թագաւորի ու թագուհու կենացն առջարկեց , յետոյ ծնողներին , իշխանների , ուէսի , գիւղի :

Անտօնը խմում էր , հա՛ խմում :

Չորս կողմում կենացներն իրար էին յաջորդում : Անտօնը ականջ չէր կախում , խմում էր հէնց այնպէս , իր առանձին մտմտուկն ունէր , ծաղի կանչը : Հարեւաններին էլ ուշք չէր գարձնում :

Նուազածութիւնը յանկարծ լռեց . լուեց ուէսի ձայնը :

— Դէ՛հ , հա՛րեւաններ , բա՛րեկամներ , ա՛զգականներ , քա՛ւոր , քե՛օի , փեռայ , հօ՛ր-

եղբայր, ազգուտակ, կանչեց ուէսը, առաջ եկէք. երեք օր կերանք, խմեցինք, ուրախացանք, Բրուտի օջաղը շէն մնայ, գէհ, հիմայ առաջ եկէք:

Մաղի կանչն էր:

Դար լռութիւն տիրեց:

— Շահի'ն ախպէր, ձէն հանող չը կայ. գիտես, էլի, դարձաւ ուէսը Շահի'նին, գիտես, ոչխարի սուրուն Սէիզը (1) կը տանի, քիտագ բաց:

Կրկին լռութիւն տիրեց. ամենքը խառնում են գրպանները. ոմանք ափերի մէջ մանր դրամ են համարում:

Ու յանկարծ լուեց գզրի կանչը:

— Հազարաթ, անկաջ արէ՛ք, իշխան Շահի'նի տունը շէ'ն, դարկեահը լէ'ն, հինգ մանէթ, հաա'...

— Շէ'ն մնայ, շէ'ն մնայ, Աստուած մէկը հազար անի, լուեց այս ու այն կողմից:

Գզիրը նորէն կանչեց:

— Հազարաթ, անկաջ արէք, Սաքանի

(1) Այծերի արուն, որ առաջօրգում է հօտը:

տունը շէ'ն, դարկեահը լէ'ն, հինգ մանէթ, հաա'...

— Շէ'ն մնայ, շէ'ն մնայ:

— Հազարաթ անկաջ արէք, Ղազարի տունը շէ'ն, դարկեահը լէ'ն, չորս մանէթ:

Գզիրի կանչը շարունակեց:

Իշխան, ազգական, բարեկամ, քաւօր, հետզհետէ պարզեցին թղթադրամները. հինգը՝ չորս դարձաւ, չորսը երեք, ապա երկու, մէկ...

Գզիրի ձայնը գնալով իջաւ. կանչը կորցրեց հանդիսաւորութիւնն ու կրճատեց նուէրներին համապատասխան եղանակով:

— Օրտուենց Մանուկի տունը շէ'ն, մէկ մանէթ, կանչեց գզիրը ցածրաձայն:

— Բրինգարենց Մկրտիչը կէս մանէթ, տունը շէ'ն...

Ու մէկ էլ յանկարծ գզրի ձայնը նորէն լուեց խրոխտ ու հանդիսաւոր:

— Հազարաթ, անկաջ արէք, Դահ Բաշոնց Անտոնի տունը շէ'ն, դարկեահը լէ'ն, հինգ մանէթ, հաա'...

Կայծակի պայթիւն էր:

Իրարանցում ընկաւ. ոմանք ծնկերի վրայ բարձրացան Անտոնին տեսնելու համար, ու

րիչները լսածին չը հաւատալով իրար էին դի-
մում ճշտելու գզրի կանչը։ Իշխանները հեզ-
նական ժպիտ ունէին։

Քար լռութիւն էր։

— Ուհը՛, ուհը՛, ուհըր՛... լսեց Անտո-
նի հագը։

— Սարսաղ, մռմռաց Շահինը։

Ուստա Նաւօն նայը զլեց, դափը որոտաց .
ազափները խնդածայն աղաղակներ բարձրա-
ցրին, Բրինդարենց Մկրտիչը իսպառ հարբած .
Անտոնի պարանոցին ընկաւ ու համ-
քուրեց։

— Հա՛, Անտոն՛ն ախպէր... էսպէ՛ս...
մարդս, որ կայ... մարդ ա... գարկեան չ՛ու-
նես... դուռդ հէնց լէնէ ու լէն... հա՛, մարդ
ես... իշխանի հէրն անիծած, ... ումի՞ց ես
պակաս... մենք էլ մեզի կէօրայ մարդ ենք...
հի՛, հի՛, հի՛, հինգ մանէթ, զարկիր էլի...
հինգ մանէթ մի անգամից, զարկ, զա՛րկ,
հի՛, հի՛, հի՛... էստեղ էլ իշխան կայ... մեր
կողքին. ու նա մէկ էլ համբուրեց Անտոնին .
Դրսում ձիւնախառն անձրեւի փոթօրիկ էր...

III

Ուշ գիշեր է։

Հարօանիքի վերջին գիշերը .

Կոլոր պարը յեղյեղուում է մերթ ալեծա-
ծան ու հեւքօտ, որպէս գետը վարարուն, և
մերթ հանդարտ ու անուշ. որպէս նազանքը
ալիքների գօռ փոթօրկից յետոյ։

Պարի կեդրոնում բազմած են գիւղի ջո-
ղերը, իշխանները. ծաղից յետոյ՝ որպէս գե-
րագոյն հատուցումն, նրանք խմում են հա՛
խմում ջահիլների պարով հմայած։ Կարմիր
հարսն ու երջանիկ փեսան— թագաւոր ու թա-
գուհի— ողջ զար ու մախմառ, «թախտին են
նստել»։

Ու նրանց շուրջը մերձաւոր առագաստի
խորհուրդն է մրրկուում տարփոտ պարով։

Պարում են ջահիլ աղջիկ, տղայ առա-

գաստի երազ թրթիռով: Մի հզոր ու անպարփակ կրք ցնցում է խայտաբղէտ զգեստների տակ գալարւող մարմինները. Պարր քանի դնում աւելի խելայեղ, աւելի բոցոտ է դառնում:

Առագաստի ծածուկ զոզոջը լանջերի տակ ետում է հուր ծփանքներով ու վառում ջահիլներին:

Պարագլուխը գոյնզգոյն մի թաշկինակ օդի մէջ ճօճելով, ոտներն է դօփում դաշն ու հարուստ թափով ու գաղւենի տանջանքի հաճոյքից մռնչում է, որպէս գարնանը դուրս պրծած մատաղ ցուլ:

Պարի կենդանի շղթայի մէջ մատնների խտտղան զրոյցը կայ խենթ ու դաւադիր: Պարող աղջիկները շառագունում ու գետին են նայում ամեն անգամ, որ մի կրակ տղայ իր հայեացքի շիկացած նետն է մխրճում նրանց հոգին կամ ճկոյթն է սղմում իր ջլուտ մատներով: Սղմում է կատաղօրէն ու գաղտնի ցաւը բոցեղէն փրփուր է յարուցանում մատաղ սրտերի մէջ:

Ոտների զոփիւնը զօրանում է:

Զիւտերի ջիւերը գալարւում են վառւող

գալար շիւերի պէս. և գաղջ մարմինները մտրակւած նժուգների պէս սլանում են պարագլխի յետեւից: Իրար հրհրելով ու հոտոտելով ջահիլները նետում են ասես խուսափող բաղդի յետեւից ու չըջան անելով՝ գալիս են նոյն տեղը: Կախարդական շրջանը ինքն իր վրայ է դառնում, ինչպէս մի ծանր հարցում, որ պատասխան չ'ունի ու ետում է տարփանքի տանջանքով:

Ուստա Նաւօն իր լերկ թշերն ուռցրած, ինչպէս զոյգ կարմիր խնձոր, աչքերում բարի ժպիտ, գլուխն է ցնցում իր նուագի հետ ու ահագին, լայնափող զուռնան մերթ գէպ առաստաղ դարձրած, մերթ գէպ հորիզոն, կլկլացնում է բուր թափով:

Թմբկահարի դափն է որոտում:

Ձայների ու հեւքերի ժխոր է, ծանր ու թանձր:

Կէս գիշերը վաղուց է անցած:

Ու աշխարհից կտրւած պառուները յախուռն կեանքի որոտի տակ՝ հանդարտ նղղում են հանգչող կրակներին սէս:

Մերուկ իշխանները սակայն յամառօրէն վանում են քունը. փալանները ձեռքէ ձեռք

են անցնում. գինով լի սուրահիները շատ շուտ են դատարկւում:

— Մառնապետ գինիի՛ . . .

Իշխանները քէֆ են անում:

— Թագաւորի ու թագուհու կենացը:

— Ամէն, ամէն, անժւշ . . .

Փիալաները դատարկւում ու նորէն լըցւում:

— Մառնապետ գինիի՛ . . .

Իշխանները կեանքի մնացորդն են փշրում այս գիշեր:

Գինի են խմում ծերուկ ջոջերը ու նրանց նուազած աչքերում անցած օրերի մշուշն է լսողում փոթորկից մոռացւած ամպի պէս:

Ու ամեն մէկը հարսանեկան իր մաշտած առագաստն ունի հեռու, հեռու ճերմակ հորիզոններում, ուր տակաւին մի կրակ է պլպլւում ու հանգչում, որպէս խուսափող նաւի ճրագը:

Այս գիշեր ջահելներից յետոյ՝ ծերուկ իշխանները, ջոջերը, ճերմակ միրուքները ամբամբացնելով պիտի պարեն այս նոր առագաստի առաջ այն հինի համար, որ էլ դարձ չունի . . .

— Մառնապետ, գինիի՛. կոչում է Անտոնը իսպառ հարբած, հէյ Շահին, պէտք է պարես էս գիշեր իմ մեղաւոր ջանի հետ . . . ջանդ դուս գայ Շահին:

— Հի, հի, հի . . . ծիծաղում է կամացուկ Բրինդար Մկրտիչը, էն ո՛նց էլաւ առ . . . Անտոն ախպէր . . . հինգ մանեթ մի անգամից . . . ախր իշխանները . . . վահ. իշխանները կը մեռնեն, տնա՛շէն . . . ի՛նչ կայ որ . . . թո՛ղ մեռնեն . . . Մարդս որ կայ, մարդ ա . . . մենք էլ մեզի գետրայ մարդ ենք . . . Թո՛ղ մէկ բելք պաչեմ, հի, հի, հի . . .

Ու Մկրտիչը փորձում է նորէն համբուրել Անտոնին, որ սակայն բռնում է նրա պարանոցը ու սղմում է անմտօրէն. Մկրտիչը թափ է տալիս պարանոցը՝ խօսող աքաղաղի ձայներ արձակելով:

— Սաքան՝ պէտք է պարես, կանչում է Անտոնը, Դահ Բաշոնց Անտոնի հետ պէտք է պարես, գիտե՞ս . . . հը՞, քուրքը հի՞ն է . . . քեզ ինչ . . . գու մէյդան արի, թէ տղամարդ ես . . . մարդս՝ մարդ ա . . . փափախ հօ ունե՛մ . . . ի՛նչ կ'առես Ղազար, հէ՛յ էրկէն Ղազար . . . էրկէնի խելքը օտքերում կը լինի ու լաւ կը

պարի, հի, հի, հի...

Անտոնին էլ լսող չկայ:

— Օղորմի հորդ, քաւոր Սաքօ... կանչում է Անտոնը, մէկ սրանց նայիր, հէլ գիտի ջահիլութիւն... այ շան տղէրք, Թամզարան գրնկացրէք:

Թամզարան... ո՞վ կարող է Թամզարան պարել Դան Բաշոնց Անտոնի պէս:

Իշխանների պարն է այն:

— Ուստա Առան, հէ՛յ ուստա Առան, քո տունը չաւերւի, աշխարհն էլ է՛ս է, էլի՛... ասում է Սաքանը:

Ուստա Առանը գինու զօրից կամացուկ հեծկլտում է:

— Վախ, վախ, ֆալա՛գ, տունդ աւերւի. հէյ չարխի ֆալագ, մրմնջում է ուստա Առանը:

— Մտոնապետ գինի՛... ուստա Առան, վալլան մինչեւ լուս պէտք է խմենք նորապսակների կենացը, գոչում է Անտոնը, ու խոպոտ ձայնով կամացուկ մոմռում է մի մօռացած երգի փշրած կտորները:

— Էն ի՛նչպէս էր, Սահակ ախպէր, գառնում է Անտոնը իր հարեւանին, էն ի՛նչպէս էր էն անտէր խաղը, «Աշխարհը փանջարայ...»

հա՛, էն ի՛նչպէս էր:

Սուկար Սըհօն նախպէս հարբած՝ աչքերը կիսախուռփ, ձեռքը անդադար զարկում է Բրինդար Մկրտիչի ծնկանը:

— Հա՛, էն էի ասում, տնաքանդ, լացս գալիս ա... ասում է Սըհօն, հա, քսան տարի էս օր... էն մեր մեծ աււի կշտին... հա, աււի կշտին... Տէր-Ղուկասով եարանալի ձիան զանգուն բոնեցի, ինչպէս էս քօ ծունկը. զանգուն բոնեցի եարանալի ձիան... քո տունն աւերւի... բա հէ՛շտ բան ա, մագեար... քսան տարի առաջ համին էս օր... հէյ, հազարա՛թ, եա՛, գգիրն ո՛ր ա... հէ՛յ, հազարա՛թ, հաւսարական եարանեալ Տէր-Ղուկասովի կենացը:

Ու Սուկարը մենակ է խմում, լսող չունի:

Մկրտիչը նղղել է իր տեղում, գլուխը կրծքին քաշ, իսպառ հարբած ու շարունակ կարմրած քթի վրայից քշում է չեղած ճանճը:

— Էս անտէր ճանճը, հաա՛, ձուն ձմրան:

— Ծանճ չը կոյ, տնաքանդ, ասում եմ, քսան տարի առաջ, կրկնում է Սուկար Սըհօն... հա, համին էսօր... Տէր-Ղուկասով եարանալի ձիան զանգուն էս ձեռքով բոնեցի

... զանգուն էէ՛, զանգուն :

— Հը՞... զանգո՛ւն... բա, Ջանգուն է-
րէւանի տակն ա... մոմուս է Մկրտիչը :

Անտոնը կամացուկ իր աւերակ երգն է
սկսել :

«Աղխարհը մի փանջարայ է :

«Ամեն եկող կր նայի ու կ'անցնի...» :

— Հի, հի, հի, ծիծաղում է Առանը ար-
ցունքի միջից, հր, լաւ նայեցինք փանջա-
րան... հալա համր բերաններիս է, ա էսպէս
գնում եմք...

— Փանջարայի կենացը, մոնչում է Ան-
տոնը, ամա թէ ձեռս ճար ըլնի, էս անտէր
քուրքը կր հանեմ ու էդ նզոված փանջարան
կը կոխեմ, որ էլ մարգ չը նայի :

— Քո կենացը, Անտոն ախպէր, սո էդ
ի՞նչ ասիր... կանչում է Սաքանը :

Անգամ մալլ ու զգաստ Շահինը խնդաց :

— Միծաղիր Շահին, ծիծաղի՛ր, կանչեց
Անտոնը, քո փանջարան հօ բաց է ու բաց :
Չուխագ՝ խաս, փափախգ՝ բուխարի... ամա
էս քուրքի հետ էսօր պէտք ա պարես թամ-
զարան... հէ՛յ շան լակոտներ, թամզարան,
ասում եմ... նօբաթը մերն է. հէյ ուստա

Նաւօ, քո զուանան անիծեմ, թամզարա, ա-
սում եմ...

Անտոնին լսող չը կայ :

Ուստա Նաւօն եղանակը փոխեց, բայց
էլի թամզարան չի :

Իշխանների, ջոջերի պարն է թամզարան,
որ գալիս է միշտ վեհաշուք քայլածքով
հանգարտ ու ծանրակոկոթ, որպէս իրենք
ծերերը :

Փալիս է բոլոր պարերից, բոլոր արբչի-
խենթութիւններից յետոյ :

Մետաքսէ ծիրանին է նա, որ յոգնած
ցնծութիւնը նետում է բոլոր գոյնզգոյն,
խտտզուն զգեստների վրայ նրա իմաստուն ու
թանձր ծփանքների տակ կրքի փոթորիկը
մեղմելու համար :

Ուստա Նաւօն լաւ գիտէ նրա ժամը :

Ու մինչեւ այդ՝ ջահիլները պիտի կրակ
կարեն ու բոցավառեն խարոյկի պէս :

Ազլիկ, տղայ յետին թափով շրջան են ա-
նում աւազների շուրջը : Մտտազ տարփանքի
հրաչէկ աչքերը իրենց խորհրդաւոր ու անուշ
տանջանքն են վառել ընտրած կոյսի թրթռուն
սախնքների տակ, պարի շրջանը կենդանի հնոց

է հայեացքները ու վառ այտերի :

— Թամզարա, մռնչում է Անտոնը գինու շիշի վրայ կռացած ու կատաղորէն ցնցելով իր քեաքուլը, Թամզարա ասում եմ, իշխանները պէտք է պարեն :

Եղանակը նորէն փոխւեց, որ դարձեալ Թամզարան չի :

Հարս ու փեսայի աջելու առագաստի մոլեգնութեան վերջին փոթորկումն է :

Ուստա Նաւօի թշերն են պայթում նւագի զօրից . դափի որոտից ցածրիկ առաստաղն է թնդում :

Չահիլները մէկ էլ թափ առան . ձեռքերը թողին, բազուկ բազկի տւին ցատկելու համար :

Այլեւս աղջիկների տեղը չէ : Նրանք դուրս թան պարի շրջանակից, ինչպէս խուճապած ճնճողուկները բազէների ճանկերից :

Երիտասարդների շարանը դարձաւ մարմինների միապաղաղ ու թռթռուն զանգւած, տաք ու կրքոտ : Արունների կատաղի ուսուսմն է սկսւած, մարմինների տարփոս խշրտուկը ի պատիւ հարսի : Ծունկերն են ծալւում ու բացւում, ու պարողների շարքը մերթ գետ-

նամած է փշրւած հասկի պէս, և մերթ ցրցւած ինչպէս անտառը փոթորկի շնչի տակ :

Քրտինքի դառն հոտը ողջ տունն է բռնել, գլուխներից բարձրանում է տաք գոլը ու բակ կապում առաստաղից վար, մոմերի աղօտ լոյսի տակ :

Ճիչ, աղմուկ, անիմաստ կանչ, ցատկումների համաչափ տնքոց, հարբած մամոց, խելայեղ քրքիջ, ոտների դաշն թնդիւն, խառնւում են իրար ձայների միահամուռ ժխորի մէջ :

Ու յանկարծ ուստա Նաւօն զուռնան ցած առաւ շրթունքից, դափը լսեց, Չահիլների պարը վերջ առաւ :

— Թամզարա, կոչեց Անտոնը :

— Թամզարա, Թամզարա, ձայն տւին այս ու այն կողմից Չահիլները, իշխանները պէտք է պարեն :

Ուստա Նաւօն լայն շունչ առաւ, ճակատի քրտինքը սրբեց ու կրկին զուռնան շրթունքին դրեց :

Սկսւեց Թամզարան :

Իշխանները ստքի ելան, Անտոնը ամենից առաջ :

Թամզարայի աննման վարպետն է նա :

Ամենքը մոռացել էին այդ . Չէր մոռացել միայն ինքը՝ Անտոնը . որ անդադար պահանջում էր Թամզարան և անհամբեր սպասում իր ժամին :

Այժմ կանգնած է Անտոնը գլխաբաց , հարուստ քեաքիւլը ցաք ու ցրիւ գլխին , ինչպէս հողմածին ծառի կատարի սաղարդը , ու գոյնրզգոյն Թաշկինակը ձեռքին , ճօճում է ու կանչում :

— Հը՛ , վեր կաց Շահին . . . հէ՛յ Սաքան , օրդ է հասել . էրկէն Ղազար բոյդ անիծեմ , մէջտեղ արի . էյ , Ասա՛ն , բօլ է կատարդ տաքացնես , թեւերդ քշտիր . Դահ Բաշոնց Անտոնը հօգիդ պէտք է ասնի . մինչեւ լուս պէտք է պարենք . ուստա Նաւօ փչի , քանի զոռ ունես , իշխաններն են պարում ախր , հայ հօւ ո՛ւ , հա , հա , հա , հա . . .

Ու Անտոնը քրքջում է ջլախտաւօր ծիծաղով :

Չուսնան նորէն կլկլաց զաչն ու թաւ , ինչպէս հանդարտ ծովի ծփանք . չափը խուլ , գանդաղ թնդաց , Թամզարան հօսեց ինչպէս հանդարտ հարթութեան միջից հոսող գետ ,

ամբողջ օրօր . նազանք ու շնորհք :

Անտոնը կանգնած է հպարտ ու երջանիկ , գալարում է բեխերը աջ ու ձախ , ապա ճօճում Թաշկինակը , սպասելով , որ պօրը կաղմւի . իշխաններն իրար յետեւից եկան ու շարեցին :

Անտոնը Թամզարա շատ է պօրել :

Ի՛նչ ունի այսօր , նա խռովայոյզ է ու անհամբեր :

— Շահին կ'ուզես , գեօնդի գլուխը դու բօիր , հը՞ . Ղազար արի , Առան Թաշկինակը քեզ տամ , համեցեք , էս էլ մեծաւորը շեղաւ , որ լեզուներդ բանւի :

— Դէ լաւ , տրաք տրաք մի՛ լինիր Անտոն , ձայն տւին իշխանները . շարժւիք , շրնորհդ ցոյց տուր :

— Հա՛յդէ իշխաններ , եալլայ , ոտ վերցրէք , կօչեց Անտոնը , ու պարը շարժեց :

Ո՛վ կարող է Անտոնի պէս Թամզարա պարել , երկու ոտք աջ , մէկ ոտք ձախ . ապա յետ ու առաջ նայն տեղում , իրանն անշարժ , ոտքերը խօսուն :

Ա՛հ , Անտոնը այս ժամին է սպասում ահա երեք օրից ի վեր . քօւրքն են ծաղրում , դէհ թող մէջտեղ գան , նստելու տեղ չէին տալիս ,

հիմա կը տեսնեն :

Ու Անտոնը քուրքի փէշերը քշտեց զարկեց գօտին ու պարր քաշ տւեց իր յետեւից :

Չահիլները քրքջում են . աղջիկները խընջիկ մեջիկ ծիծաղում քթի տակ . պառաւները քնից զարթել են ու աչքերնին ճմռելով , նա-յուժ են տեսարանին :

Իշխանները հետեւում են Անտոնի շարժու ձեւին , աշխատելով նրա պէս փոխել քայլերը :

Հե՛շտ է Անտոնին հետեւել . քսան տարեկան երիտասարդի պէս ճկուն , նա շորորում է նազանքով . գլխի քեաքիւլը թափ տալիս նժոյգի բաշի պէս , աջ բազուկը աղեղնաձեւ օգի մէջ գալարուն ու թաշկինակը ճօճելով ձախ ձեռքով քաշում է իր յետեւից պարօշ-ւերին :

Նա պարում է ու հրահանգներ տալիս մերթ նւագածուններին , մերթ պարողներին :

— Ուստա Նա՛ւօ , ուսու՛լով , ա՛յ էստեղ կակուղ վերցրու . . . հր , հիմա թափով . . . էլի կամաց , զուռնագ անիծեմ , սրան թամզարա կ'ասեն :

Իշխանները երերում են ու չփոթւած են . նրանցից և ո՛չ մէկը չի կարողանում Անտոնի

օրինակին հետեւել : Շահիւր հօ . իսպառ գլուխը կորցրած՝ միրուքն է տմբոմբացնում ու օրօրում նոր ոտքի ելած երեսայի պէս :

Սաքանը հազիւ է պահում ուսերին իր հարբած գլուխը ու ոտքերն իրար է խառնում :

Էրկէն Ղազարը խճճել է իր բուրմայի մէջ , ու էլ չը գիտէ , ո՞ր կողմը դառնայ , ա՛յ , թէ՞ ձախ :

Առանը զարկում է մերթ մէկ , մերթ միւս հարեւանին ու հնարք խորհում դուրս պրծնել շարքից :

Սօկար Սըհօն , Բրինդար Մկրտիչը , Օրդուէնց Մանուկը պարի պոչին են ընկել ու տնկտնկում են անմտօրէն , ընդհանուր ծիծաղ շարժելով :

— Հայ եօ ձեր մարդ ասողի . . . մռնչում է Անտոնը , էջի մէյդան չի էօ , սրան թամզարա կ'ասեն , հա , հա , հա . հա . . . ու քըրքջում է անզուսպ . ջլուտ ծիծաղով :

Քրտինքը կօխել է իշխաններին :

Անտոնի փոյթը չէ . նա քաշ է տալիս ձեռուններին , հեգնում ու չարչրկում :

— Շահիւն , հէ՛յ իշխան Շահիւն , ճչած Անտոնը , ա՛յ բէղէյրաթ , ա՛յ ոտքդ , ա՛յ դ . ա-

նիծեմ քո աջն էլ, ձախն էլ, հա՛յ դու առա-
նակ :

Աւանա՛կ, իշխան Շահի՞նք...

Անարգանքն ահագին է, որ Անտոնը շար-
դեց պարի մէջ ինչպէս մի ծանր ապտակ.
հանդիտականների ծիծաղը լսեց. ամենքն ըզ-
գում են, որ աւուած խօսքը քէն ու վրէժի
խօսք է. բայց հարսնիք է, պար, ուրախու-
թիւն :

Ջգում է և Շահինք. նա կանգ առաւ
պարի մէջ ու նայում է Անտոնին, որ անուշա-
ղիբ, հակառակորդին քաշում է շարքը ու պա-
րում անտարբեր :

Պատաները շնչում են տհաճ. ջահիլները
քարացած են, սպասում են, թէ ի՞նչ կ'անի
Շահինք :

— Հը՞, էշիդ թօշ ասին, ճշած Անտոնը
նայելով կանգնած Շահինին, շարժւիր, փչի
Նաւօ, լաւ փչի, թող իշխան Շահինք տնկ-
աընկայ :

Ո՛չ, իշխան Շահինք այդ անարգանքը չի
տանի, նա գիւղի առաջին մարգն է :

— Լօպպազ, մոմօսց նա քթի տակ ու
թողեց պարը, հեռացաւ :

Ձեռքդ տո՛ւր Սաքան, ձեռքդ տո՛ւր,
Շահինի միրուքը ծանրութիւն արաւ... հը,
ձախ օտքդ, ձախը առում եմ, բ՛ն, բ՛ն, այ
էօպէս, ի՞նչ ես ականախ գլուխդ երերում, յետ
քաշւիր, առաջ, առաջ, վա՛յ անասուն :

Սաքանը թողեց պարը ու հետեւեց Շահի-
նին :

— Գնա՛, գնա՛, տւածդ ծաղի տեղը դեռ
չես հանել, գնա խմիր բոուտի գինին :

Անտոնը բռնում է Ղազարի ձեռքը :

Հատուցումի ժամն է հասել. հին ցա-
սումն ու քէնը եռում են իր հօգում. բարձրա-
վիզ ու բացբերան Շահինն ու հաստազուխ
Սաքանն ստացան, Անտոնի ծածուկ վրէժը
պոսթկում է սպաննիչ մաղձով. նա էլ հարբած
չի, նա այժմ հաշիւ է պահանջում իր խեղ-
ճութեան, իր քուրքի, իր կրած վիրաւո-
րանքների համար :

Արդարութիւն կայ չէ՞... :

Օրը կը հասնի... եւ հասել է :

— Ախպէր Ղազար, սօ, սօ էդ ի՞նչ ես
անում, հը, հը, այ էօպէս, էօպէս, հը լաւ է,
մէկ էլ, մէկ էլ, սօ, սօ՛, էլի՛ օտներդ իրար
խառնւեցի՛ն, վայ դու հայւան :

Այս անգամ էրկէն Ղազարը ծառացաւ, նա այս վայրկեանին սպասում էր. հետեւել էր Անտոնի շարժուձեւին, գիտէր, որ այս բոլորը ռոսկ գինու ազդեցութեան ու հարսանեկան տնամեղ խենթութիւններ չեն, ու նա իր երկար քաղուկները ձգեց, Անտոնի երկու ուսերը բռնեց, ու ցնցեց ուժգնօրէն:

— Ի՞նչ ասիր... ես քո մարդ ասողի, գոչեց նա, շան պէս լալկել ես, էլ ոչ մեծ ես հարցնում, ո՛չ փօքր:

— Տօ, սօ, ես քո էրկէն բոյդ անիծեմ, պատասխանեց Անտոնը ատամները կրճտելով ու թափ տալով իրան, յետ քաշւեց. մէջքը պտտին աւեց, բազուկները վեր քաշելով:

Երկու հակառակորդները զէմ առ զէմ կեցան կատաղած ու կարմրած:

— Ղազար, ա՛յ Ղազար, կոչեց Շահինը մէջ ընկնելով իշխանաւոր եղանակով, ինչի՞ վրայ ես, էս օջաղի պտտիւր... ի՞նչ ես գլուխ դնում հարբեցողի հետ, չե՞ս տեսնում, որ բերնի ծակը կորցրել է:

Այս ու այն կողմից մէջ ընկան հանգրսակապները, խոհեմութեան ձայներ բարձրացան:

— Հարսանիք է, աւելի պակաս խօսք կը լինի, Ղազար, ա՛յ Անտոն, ամօթ է:

Արդէն անախորժ միջազէպը վերջանալու վրայ էր, երբ Ղազարը բարձրաձայն կրկնեց:

— Քաղցած չո՛ւն, հալին նայիր, քուրքին ու իր խօսքերին, չափդ ճանաչիր ասում եմ:

Անտոնը, որ մինչեւ այդ լուռ էր ու անշարժ, թափ առաւ տեղից, պատուեց ամբոխը և բարձրացրած բռունցքի ծանր հարուածը Ղազարի գլխին իջաւ. հակառակորդները իրար պլլւեցին կատաղած օձերի պէս, մնացած բազմութիւնը վրայ թափուեց. մէկը բաժանում էր կռուողներին, մէկը հայտնում. մէկը հարւածում, հարբածներ ու զգաստներ իրար խօսունւած, իրար էին քաշքշում, տրորում: Մէկն ընկաւ, մէկ երկուսին զօրով դուրս տարան, աղմուկ, ճիչ, կտնանց վայնասուն . . .

Դուրսը փոթորիկը դադարել էր. բայց մանրամաղ ձիւնախառն անձրեւը թափւում էր հա՛ թափւում, չորս կողմում յարկ, բնակութիւն լողում էին թաց մթնշուրտի մէջ:

Անտոնը մէն-մինակ գնում էր խաւար ու
լպրծուն փողոցներով, քուրքը ծւէն-ծւէն ու
թրջլած, գնում էր, ու ինքն իրան խօսում.

— Նամա՛րգներ, ձեռքս ո՛վ բռնի... Բրին-
գար Մկրտիչը, Սօլկար Սըհոն... հարստի գրան-
չուն, ու յիշեց Բրինգար Մկրտիչի միրուքը,
որ յանկարծ ձեռքն ընկաւ կռւի սաք ժամա-
նակ, Անտոնը կատաղօրէն թափ տւեց, ու
Մկրտիչը իծի պէս մկկաց:

Ու մի խելայեղ ծիծաղ բռնուց է Անտո-
նին, նա ամեն բան մոռացել է, և՛ կռիւը, և՛
ծեծւըտուկը, և՛ Չազարին տւած ու առած՝
հարւածները, բայց օրդ Մկրտիչը... ու իր
մկկոցը:

— Հապա՛, գեղն ընկած գայլի վրայ
բրուտի շունը բարձր կը հաջի. ու նորէն-
քրքջաց Անտոնը ջղայնօրէն...

Անձրեւը թափւում էր...

Հասաւ տուն. դուռը բացեց ու մնաց
քարացած:

Առատաղի չորս կողմից սեւ, թանձր կա-
թիլները ընկնում էին համաչափ ու դաժան,
ինչպէս բաղդի հարուածներ:

Կաթուղին էր... անիծւած Կաթուղի:

ձըլ՛՛փ, ճըլ՛՛փ, ճըլ՛՛փ...

Կինը շտապ-շտապ ամաններ էր շարում
այս ու այն անկիւնը. ո՛ր մէկին հասնէր.
ամէն կողմից ջուր էր թափւում. Ստեփանիկը
կծկել էր մի պատի տակ, ու հեծեծում էր,
օրօրօցի մանուկը զարթել էր ու ճչում. հիւ-
սիսային պատն ի վար սեւ ջուրը հոսում էր
վտակի պէս:

Անտոնը քարացած իր տեղում, նայում
էր, ասելիքն ու անելիքը չիմանալով, նայում
էր, ինչպէս կը նայեն հրդեհին, որ լափում,
ճարակում է յարկ, բնակութիւն:

Եւ յանկարծ, տան հիւսիսային պատը
թեքւեց ու օրոտալով փուլ եկաւ, թողնելով
մի անագին բացւածք. Անտոնը վազեց դէպի
երեսաները, կտուրը կանգուն էր:

Անձրեւը դադարեց. Կաթուղիը շարունակ-
ւում էր.

ձըլ՛՛փ, ճըլ՛՛փ, ճըլ՛՛փ...

Հեռուից նորէն լսեց դափ ու զուռնայի
ձայնը:

— Իշխաններին պատուով ու փառքով
ճաժբայ են գնում, մամռաց Անտոնը, հէ՛յ գի-
տի բաղդ... փանջարան տես, ի՛նչ փանջարայ

բացւեց տանս վրայ, ես քո... ու նա կա-
ռաղօրէն բռունցքը մեկնեց դէպի բացւած քը-
պատին. ո՛ւմ էր օպառնում, բաղդի՞ն, աշխար-
հի՞ն, երկնքի՞ն, Ասածօ՛ւն, ինքն էլ չը գի-
տէր :

Հօւտարաց էր :

Պատի փլւած քից լոյսի խօնաւ խուրձերը
ներս ընկան :

Հեռուն անծայրածիր, մառախլապատ հո-
րիզոն :

Ու այնչափ մուխ ու ցաւոտ մտածում
կար այն թաց առաւօտի մթնօլորտի մէջ :

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՅՈՒՍԱՐԵՐ»

| | |
|--|-------------|
| 1. Լուսծ Ջրաղացր, Հ. Զուտերման Թրգմ. Գ. Մխիթարեան | հ. գ. 10 |
| 2. Ինչ չէր և ինչ չպիտի լինի մեր ուղին, Վ. Նաւասարդեան | 5 |
| 3. Հայ-թրքական կնճիոր, Ռուբէն | 6 |
| 4. Հ. Յ. Դաշնակցութեան անելիքը, Վ. Նաւասարդեան | 8 |
| 5. Երկու ամիս բոլշեւիկեան բան- տուժ, Բախչի Իշխանեան | 10 |
| 6. Դաշնակցութեան «Լիկւիդացիան» Վ. Նաւասարդեան | 7 |
| 7. Էջեր իմ օրագրէն, Գ. Նժդեհ | 5 |
| 8. Ընկերվարութիւնը և Դեմոկրա- տիզմը, Վ. Նաւասարդեան | 2 |
| 9. Թէրէզ Ռաքէն, Էմիլ Զօլա, Թրգմ. Գ. Մխիթարեան | 15 |
| 10. Դաշնակցութեան քաղաքական ուղին, Վ. Նաւասարդեան | 7 |
| 11. Կայսրը, Լ. Շանթ | 10 |
| 12. Հայ Միտքը, Ե. Ֆրանգեան | 3 |
| 13. Սահմանադրական Վէճը, «Յու- սարեր» | — |
| 14. Կաթուղի, Ա. Ահարոնեան | 3 |

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

«Ազգային գրադարան»

 NL0374153

ԳԻՆ Յ Ե . Դ .

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՄԱՐ 20 ՍԷՆՔ

96481